ԳԵՎՈՐԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, Արևմտահայության կացությունը և Հայկական հարցի միջազգայնացումը (1850-1870-ական թթ.), Ե., «Էդիտ պրինտ» հրատարակչություն, 2009, 262 էջ:



Հայկական հարցին նվիրված են ոչ քիչ թվով ուսումնասիրություններ՝ սկսած այդ հարցի միջազգայնացման ժամանակից մինչև մեր օրերը: Այս հանգամանքն արդեն իսկ վկայում է հիմնահարցի հանդեպ տարբեր մոտեցումների, տարակարծությունների, անգամ իրարամերժ լուսաբանումների մասին, որ տակավին չեն հանդարտվում: Մեզ համար այստեղ կարևորն այն է, որ սույն աշխատության հայտնությունն արդեն վկայում է հիմնահարցի արդիական նշանակության մասին, մանավանդ հեղինակը ձեռնարկել է մի գործ, որտեղ հանրագումարի են բերվում Հայկական հարցի վաղեմի և ներկա քննարկումները, որպիսիք հեղինակն ամբողջացնում է իր այս աշխատանքով, և այստեղ էլ կցանկանայի առանձնացնել հետևյալը.

1) որո՞նք էին Հայկական հարցի միջազգայնացման պատճառները.

2) հասարակական ու քաղաքական ի՞նչ պայմանների բերումով այդ հարցը դարձավ միջազգային իրավունքի օբյեկտ:

Այս հարցերին Գ. Հարությունյանը մոտենում է նորովի: Հայկական հարցի միջազգայնացումը նա խարսխում է արևմտահայերի սոցիալական և իրավական կացության, Օսմանյան Թուրքիայի և տերությունների փոխհարաբերությունների և, մյուս կողմից, Ռուսաստանի և Թուրքիայի քաղաքական ու ռազմական խոր հակասությունների հետ: Ապարդյուն էին եվրոպական պետությունների, հատկապես Անգլիայի ու Ֆրանսիայի գործադրած ջանքերը՝ բարեփոխելու Օսմանյան Թուրքիայի վարչությունը, քաղաքականությունն ու տնտեսությունը, ինչպես և Բ. Դռան հպատակների իրավական կացությունը: Փարիզի պայմանագրից (1856 թ.) հետո և դրանից էլ առաջ՝ թանզիմաթի առաջին ակտերի ժամանակից (1839 թ.), ի դերև ելան Եվրոպայի և օսմանյան բարենորոգիչների ջանքերը՝ երկրում հաստատելու հպատակների իրավահավասարություն, ընձեռելու անհատի կյանքի և գույքի պահպանության երաշխիքները: Փաստորեն, Թուրքիայում իշխում էր կրոնական, ազգային և քաղաքական խտրականությունից սնվող վայրագ քաղաքականությունը, որը ոչ մի կերպ չէր կարող կասեցվել թանզիմաթով ենթադրվող որոշ տնտեսական, իսկ հիմնականում իրավական բարեփոխումներով: Օսմանյան սոցիալ-տնտեսական և իրավաքաղաքական հարաբերությունները նշված ժամանակահատվածում իրենց բարեփոխումների ձախողված ընթացքով, ըստ էության, կատալիզատորի դեր ունեին Թուրքիայի հպատակ ժողովուրդների ազգային ինքնագիտակցության խորացման, նրանց բողոքի տրամադրությունների և ազատագրական պայքարի դիմելու համար:

Աշխատության առաջին գլխում հեղինակը նախապատրաստել է հայության մեջ ազգային ինքնորոշման տրամադրությունների խորացմանը մղող հասարակական, տնտեսական և իրավական բարեփոխումների ձախողումներից ծնվող Հայկական հարցի միջազգայնացման պայմանները: Հայկական հարցի միջազգայնացումը այս գլխում դիտարկվում է հենց վերը նշված գործոնների՝ որպես օբյեկտիվ պատճառների համատեքստում: Այս պատճառով էլ գրքի հեղինակը առանձին-առանձին քննարկել է այն խնդիրները, որոնք առնչվում են արևմտահայերի սոցիալական և իրավական կացությանը, Ազգային սահմանադրության համար նրանց մղած պայքարին, Օսմանյան Թուրքիայում բարենորոգչական շարժումներին և դրանց հետ կապվող խնդիրներին: Ուստի այս գլխում քննարկվում են հայ հասարակական մտքի և օսմանյան բարենորոգչական շարժման փոխառնչությունները: Եվ այստեղ նորույթը հետևյալն է. Հայկական հարցի միջազգայնացման նախապայմաններից մեկն է դիտվում այն, որ «նոր օսմաններն» իրենց շովինիստական և ազգայնական սուր ուղղվածությամբ վանում էին հպատակ ազգերին՝ ակնհայտորեն ընդգծելով նրանց թուրքացման կամ մահմեդականացման կարևորությունը և դրանով իսկ այդ հպատակներին մղելով ինքնուրույն և սեփական շահերին ուղղված գործելակերպի: Հետևաբար, օսմանյան բարենորոգիչների գաղափարախոսությունը ոչ մի կերպ չէր կարող համընթաց գնալ ճնշված ազգերի ինքնորոշման տրամադրություններին, այլ ընդհակառակը, խորացնում էր դրրանք՝ հասունացնելով վերջիններիս դրսևորումները:

Գրքի երկրորդ գլխում քննարկվել է հետևյալ հարցը. Թուրքիայում տերությունների քաղաքականության նշանակությունը Հայկական հարցի միջազգայնացման համար:

Արևմտյան Հայաստանը անպայման ընդգրկվում էր եվրոպական տերությունների և Ռուսաստանի քաղաքականության ոլորտում՝ վերածվելով նրանց հակասությունների մի հանգուցակետի. խնդիրը վերաբերում էր նրան, որ եվրոպական տերությունները, հատկապես Անգլիան, ձգտում էին ամեն կերպ կասեցնել Ռուսաստանի ծավալապաշտական շարժումը դեպի Փոքր Ասիա, ինչպես և «տաք ջրեր»՝ կանխատեսելով և գործնականում խոչընդոտներ հարուցելով այդ շարժման հետագա զարգացումների դեմ: Այս առթիվ գրքում իրավացիորեն ցույց է տրվում, որ Հայկական հարցի միջազգայնացումը արդեն իսկ օբյեկտիվ անհրաժեշտություն էր դարձել: Այս եզրակացությունը հատկապես կարևոր է այն իմաստով, որ հեղինակը ինքնատիպ վերլուծությամբ ցույց է տալիս այն մեղադրանքի սնանկությունը, թե հայերն իրենք են մեղավոր Հայկական հարցը միջազգայնացնելու համար: Նա իրավացիորեն կարծում է, որ խնդրի նման ընթացքը, այսինքն՝ Հայկական հարցի միջազգայնացումը, ամբողջովին օբյեկտիվ պայմանների թելադրանք էր, որը պայմանավորված էր հայերի ազգային ինքնորոշման ձգտումներով և տերությունների միջքաղաքական հակասություններով, որոնք 1870-ական թթ. երկրորդ կեսին հասան հակամարտ լարվածության՝ հընթացս օգտագործելով Հայկական հարցը ի հագեցումն իրենց նույնիսկ օրախնդիր քաղաքական շահերի:

Գրքի երկրորդ գլխում կցանկանայի առանձնացնել Սան-Ստեֆանոյի պայմանագրին հեղինակի տված միանգամայն ինքնուրույն և խորապես հիմնավորված գնահատականը: Իսկապես, ըստ այդ պայմանագրի, Հայաստանի կացությունը ամրագրվում էր միջազգային պայմանագրի կամ միջազգային պարտավորության շրջանակներում: Հայաստանի բարենորոգումների գործը թեև այս անգամ ևս հանձնվում էր Օսմանյան Թուրքիայի տնօրինությանը (ռուսական զորքերի առկայությամբ, ասել կուզի՝ վե-

բահսկողության պայմաններում), բայց իր մասնակիությամբ կտրուկ հակասում էր Բ. Դռան ընդհանուր բարենորոգումների վերաբերյալ երեսպաշտական ու ավանդական ձևակերպումներին: Գ. Հարությունյանը հիմնավորում է նաև այն, որ միջազգային պարտավորության տրամաբանությամբ և ռուսական զորքերի վերահսկողության պայմաններում Հայաստանում անցկացվելիք բարենորոգումներն իրական երաշխիքներով էին ապահովվում վերոհիշյալ պայմանագրում:

Միաժամանակ ճշմարտացի է հեղինակը, որ Սան-Ստեֆանոյի պայմանագրով Ռուսաստանը ձեռք էր բերում մենաշնորհ իրավունք Հայկական հարցի նկատմամբ, այսինքն՝ Հայկական հարցը միջազգայնացվում էր զուտ ռուս-թուրքական շրջանակներում, որին կտրականապես դեմ էին եվրոպական պետությունները, նախ և առաջ՝ Անգլիան, ավելացրած այն, որ Սան-Ստեֆանոյի պայմանագրով նախատեսված մեծ Բուլղարիայի ստեղծումը մինչև Էգեյան ծով ձգվող սահմաններով առավել առարկայական էր դարձնում ռուսական վտանգը: Այսպիսով, Հայկական հարցի ռուսական մենաշնորհի վերացումը դարձավ կարևոր նշանախեց Անգլիայի համար՝ Փոքր Ասիայում իր ներկայությունը ամրապնդելու գործում:

Աշխատության վերջին՝ երրորդ գլխում քննարկվում է Հայկական հարցի հետագա ընթացքը Բեռլինի վեհաժողովի նախօրեին, բուն իսկ վեհաժողովում, ինչպես և տրվում են վերջինիս հանրագումարները: Այս գլխում պետք է կարևորենք հաջող վերլուծությունները՝ կապված միջազգային դիվանագիտական փոխհարաբերությունների, Կիպրոսի դաշնագրի (1878 թ. մայիսի 23 (հունիսի 4)), դրան նախորդած անգլո-ռուսական (1878 թ. մայիսի 18(30)) և նույն թվականի հունիսի 6-ի անգլո-ավստրիական համաձայնագրերի հետ, որոնք անգլիական դիվանագիտության նվաճումներն էին վեհաժողովից առաջ: Գրքում բավարար չափով լուսաբանվում են նաև Բեռլին և Պետերբուրգ մեկնած հայկական պատվիրակություն-ների նպատակներն ու խնդիրները, դրանց առջև կանգնած քաղաքական անհաղթահարելի խոչընդոտները, հայկական դիվանագիտության անփորձությունը և թուլությունը ենթադրող պայմանները և այլն: Գրքում ուշադրություն է բևեռում նաև Բեռլինի վեհաժողովի արդյունքների վերլուծությունը, որով հեղինակը համոզում է, որ ինքը ոչ միայն լավատեղյակ է իր հետազոտության նյութին, այլև ունակ է անելու սեփական եզրակացությունները դրա վերաբերյալ: Այդպիսիք են, օրինակ, նրա եզրակացություններն այն մասին, որ Բեռլինի վեհաժողովը մի ամբողջ քայլ հետ էր Սան-Ստեֆանոյի պայմանագրի համեմատությամբ: Վեհաժողովի 61-րդ հոդվածով նախատեսված միջոցները հօգուտ հայերի իսպառ չգործադրվեցին, որովհետև, ինչպես նկատում է Գ. Հարությունյանը, Ռուսաստանի առջև բա-ռենորոգումներ անցկացնելու օսմանյան պարտավորվածությունը (Սան-Ստեֆանոյի պայմանագիր) վեհաժողովում փոխարինվեց պետությունների կոլեկտիվ պարտավորվածությամբ, որ անորոշ ու վերացական դարձրեց այդպիսի պարտավորվածությունը:

Արժեքավոր է հատկապես հեղինակի այն եզրակացությունը, որ նշված պարտավորվածու-թյան վերացականությունը, ուրեմն և չգոյությունը, օսմանյան կառավարությանը տալիս էին ձեռքերի ազատություն՝ ուզած ձևով վարվելու միջազգային հանրության կողմից իր տնօրինությանը հանձնված Հայկական հարցի հետ: Այս պայմաններում հավաքական պար-տավորվածությունը տերություններին հնարավորություն էր ընձեռում
Օսմանյան Թուրքիայի ներքին գործերին միջամտելու որևէ պահի, հետևաբար, ըստ հեղինակի ճիշտ դիտարկման, միջազգայնացված Հայկական հարցը օսմանյան պետությունը պետք է համարեր իր դեմ ուղղված պայ-

թյունավտանգ մի գործոն, որ նա պետք է վնասազերծեր այս հասկացության կենսաբանական ինքնապահպանության գրգիռներով և քաղաքականությանն ու վայրագ գործելակերպին ներհատուկ միջոցներով:

Աշխատության վերջին հատվածում Գ. Հարությունյանը հանրագումարի է բերում Բեռլինի վեհաժողովի որոշումները Հայկական հարցում՝ ցույց տալով, որ պատմական այս ժամանակահատվածից ի վեր և միջազգային հանրության օրհնությամբ ավելի խորացան հայ-թուրքական հակասությունները: 61-րդ հոդվածը գործնականում ոչ մի դրական բան չտալով հայ ժողովրդին՝ իրականում դարձավ նրա դժբախտության, բայց և հազիվ թե Թուրքիայի երջանկության պատճառը:

Աշխատությունը գրված է աղբյուրագիտական պատշաճ հենքի վրա, համապատասխան հարուստ գրականության օգտագործմամբ, հատկապես ոչ միայն հայ, այլև օտարազգի բազմաթիվ հեղինակների (ռուսական, եվրոպական, նաև թուրքական) բազմաշերտ տվյալների հիման վրա: Չնայած հիմնահարցի բազմաթիվ արծարծումներին՝ հեղինակը կարողացել է նոր կողմերով լուսաբանել դրա շատ ծալքեր, հանգել ինքնատիպ ու թարմ եզրակացությունների: Դրանով իսկ հեղինակը ապացուցում է, որ Հայկական հարցի հետազոտման ու գնահատականի բնագավառում հայագետների նոր սերունդն ասելիք ունի: Պետք է առանձնացնել նաև հեղինակի կիրթ և հղկված ոճը, լեզվական մշակույթը:

Միաժամանակ կցանկանայինք անել մի քանի դիտողություններ, մեր կարծիքով, թերությունների վերաբերյալ, որոնք անխուսափելի են այսպիսի աշխատատար և բազմակնճիռ հիմնահարցը լուծելու գործում.

1. Ցանկալի կլիներ, որ հեղինակը ավելի խոր ուսումնասիրեր և ավելի հստակ բնութագրեր օսմանյան կառավարության՝ Արևելյան հարցի, ընդ որում՝ Հայկական հարցի զարգացումների հանդեպ ունեցած վերաբերմունքն ու գործելակերպը: Մասնավորապես, եթե հեղինակը օգտագործեր մեր աշխատությունները, ապա, կարծում ենք, նրա համար ավելի ակնառու կլիներ թուրք սահմանադրականների և նրանց առաջնորդ Միդհատ փաշայի քաղաքականության հակաքրիստոնեական և հակահայկական բնույթը:

2. Կարծում ենք, որ աշխատությունը կշահեր, եթե հեղինակը կարողանար հաղթահարել Հայկական հարցի հանդեպ թուրքական պատմագիտության սկզբունքների քննադատության որոշակի մակերեսայնությունը, այսինքն՝ թուրք հեղինակների աշխատությունները ենթարկվեին ավելի խոր և քննական վերլուծության, ինչը կնպաստեր շրջանառության մեջ դրած նրանց կեղծիքներին ավելի հստակ հակահարված տալուն:

3. Հեղինակը սակավ ուշադրություն է դարձրել օսմանյան բարենորոգչական շարժմանը հակադրվող ազգային-ազատագրական պայքարի դրրվագներին, որով հայությունը հակադրվում էր և՛ օսմանյան, և՛ եվրոպական իրավական ու վարչական ապարդյուն այն ձեռնարկումներին, որոնք սկիզբ էին առել դեռևս 1839-ի Գյուլհանեի հաթթը շերիֆի և 1856-ի հաթթը հյումայունի դրույթներով:

Նշվածը չի ստվերարկում կատարված լուրջ և բարեխիղճ աշխատանքը, որը արժեքավոր գիտական հետազոտություն է:

ՍԱՖՐԱՍՏՅԱՆ Ռ. Ա.
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր